ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

22 մայիսի ուրբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

65
(3274)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՔՊ–Ի ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

ArmLur.am-ը ուսումնասիրել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության՝ ԿԸՀ-ում հրապարակված 2025 թվականի ապրիլի 1-ից մինչեւ 2026 թվականի ապրիլի 1-ը հաշվետու ժամանակաշրջանի գույքի եւ եկամուտների հայտարարագիրը, որտեղ ներկայացված են կուսակցության ֆինանսական մուտքերը եւ ֆինանսական կառուցվածքը: Հայտարարագրի համաձայն՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջում կուսակցության դրամական միջոցները կազմել են 127,898,665 ՀՀ դրամ: Փաստաթղթում նշվում է նաեւ, որ կուսակցությունը ունի մասնակցություն «Սիվիկ Նյուզ» ՍՊԸ-ում՝ 100 տոկոս բաժնեմասով, ներդրման չափն ընդամենը 10,000 ՀՀ դրամ: Գաղտնիք չէ, որ «Սիվիկ Նյուզ»-ը հանրային դաշտում լայնորեն ընկալվում է որպես իշխանական տեղեկատվական եւ հաղորդակցական հարթակ՝ ՔՊ-ի խոսափողը, որը տարածում է ՔՊ-ի քաղաքական ուղերձները եւ կառավարության դիրքորոշումները: Այդ հանգամանքը, զուգորդված կուսակցության լիարժեք բաժնեմասով լրատվամիջոցում, հանրային դաշտում կրկին առաջացնում է հարցեր քաղաքական հաղորդակցության եւ մեդիայի ազատության առումով:

Եկամուտների մասով «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ստացել է մի քանի աղբյուրներից ֆինանսավորում, այդ թվում պետական ֆինանսավորում՝ ՀՀ ԱԺ աշխատակազմից՝ 234,727,890 ՀՀ դրամ, ահռելի նվիրատվություններ՝ 481,790,400 ՀՀ դրամ, անդամավճարներ՝ 129,524,599 ՀՀ դրամ, ինչպես նաեւ դատ. ծախսերի փոխհատուցումներ «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ից՝ 120,000 ՀՀ դրամ եւ «24 Նյուզ» ՍՊԸ-ից՝ 446,000 ՀՀ դրամ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթի՝ կառավարական շրջանակներին մոտ կանգնած բացառիկ աղբյուրների փոխանցմամբ՝ Նիկոլ Փաշինյանի կառավարությունն արդեն «Գազպրոմ Արմենիա»-ից տեղեկություն է ստացել այն մասին, որ առաջիկայում գազի գինը վերանայվելու է: Մեր տեղեկություններով՝ խոսքը ոչ թե գնի նվազեցման, այլ թանկացման հնարավոր սցենարի մասին է: Այսինքն՝ առաջիկայում Հայաստանի ներքին օրակարգում կարող է կրկին հայտնվել գազի սակագնի բարձրացման հարցը, ինչը, բնականաբար, շղթայական ազդեցություն կունենա թե՛ շարքային սպառողների, թե՛ տնտեսվարողների եւ թե՛ ընդհանուր գնաճային միջավայրի վրա: Հատկանշական է, որ Նիկոլ Փաշինյանը տարբեր առիթներով հայտարարել է, թե Վլադիմիր Պուտինի հետ շուրջ 200 անգամ խոսել է, սակայն, ինչպես երեւում է, այդ շփումները գազի գնի մասով իրավիճակ չեն փոխում: Ավելին՝ Լոռի կատարած այցի ժամանակ Փաշինյանը բավական ընդգծված ձեւակերպումներով անդրադարձավ Ռուսաստանի Դաշնությանը՝ հայտարարելով, որ ՌԴ-ն գերտերություն է, եւ Հայաստանի Հանրապետությունը պետք է ակնածանքով վերաբերվի գերտերության հետ հարաբերություններին: Նա նաեւ շեշտեց, որ ինքն այդ հարաբերություններին ակնածանքով է վերաբերվում եւ չի սրում իրավիճակը:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ՔՊ կուսակցության նախընտրական ցուցակում ԱԺ պատգամավոր Հերիքնազ Տիգրանյանը բավական հետ է մղվել. նա ընդգրկված է ընդամենը 96-րդ հորիզոնականում: Հերիքնազ Տիգրանյանը 2019-2021 թվականներին եղել է ԱԺ պատգամավոր «Իմ քայլը» խմբակցության համապետական ընտրական ցուցակով: 2019 թվականի փետրվարի 6-8-ը եղել է ԱԺ առողջապահության եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ, իսկ 2019 թվականի փետրվարի 8-ից մինչեւ 2021 թվականի օգոստոսի 2-ը՝ նույն հանձնաժողովի նախագահի տեղակալ: 2021 թվականի հունիսի 20-ին կրկին ընտրվել է ԱԺ պատգամավոր՝ արդեն «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համապետական ընտրական ցուցակով: ArmLur.am-ը ուսումնասիրել է պատգամավորի հայտարարագրերը՝ հասկանալու համար, թե ինչպես է փոխվել ՔՊ-ական պատգամավորի ֆինանսական վիճակը վերջին տարիներին: 2025 թվականի հայտարարագրի համաձայն՝ Հերիքնազ Տիգրանյանն ունի Արաբկիր վարչական շրջանում գտնվող բնակարան եւ ավտոկայանատեղի, որոնք ձեռք են բերվել 2019 թվականի մարտի 20-ին՝ գնման եղանակով եւ գտնվում են համատեղ սեփականության ներքո:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում



Իրանի բանակը լիովին պատրաստ է ջախջախիչ պատասխան տալ Իսլամական Հանրապետության դեմ ուղղված ցանկացած սպառնալիքի կամ ագրեսիայի, հայտարարել է Իրանի բանակի հրամանատար Ամիր Խաթամին: Իրանի նախագահի աշխատակազմի հաղորդագրության համաձայն՝ Ամիր Խաթամին նախագահ Մասուդ Փեզեշքիանի հետ հանդիպման ժամանակ ներկայացրել է բանակի կողմից ձեռնարկված օպերատիվ իրավիճակի եւ պաշտպանական միջոցառումների մասին զեկույց: «Իրանի Իսլամական Հանրապետության բանակը՝ օգտագործելով դաշտային փորձը, ամրապնդելով օպերատիվ պատրաստվածությունը, զորքերի միջեւ համակարգման մակարդակը եւ արդիականացնելով մարտական եւ աջակցության կարողությունները, լիովին պատրաստ է վճռական, կործանարար պատասխան տալ երկրի դեմ ուղղված ցանկացած սպառնալիքի, ագրեսիայի կամ արկածային գործողության», - Խաթամիի խոսքերն է մեջբերել նախագահի պաշտոնական Telegram ալիքը:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«...ՈՐԵՎԷ ՍՊԱՌՆԱԼԻՔ ՉԻ ԱՇԽԱՏԻ»

ArmLur.am-ը զրուցել է «Հայաստան» խմբակցության պատգամավոր Լեւոն Քոչարյանի հետ:

-Պարոն Քոչարյան, Նիկոլ Փաշինյանը բավական կոշտ եւ սպառնալից հայտարարություններ արեց Ռոբերտ Քոչարյանի, Սերժ Սարգսյանի եւ Գագիկ Ծառուկյանի հասցեին՝ օգտագործելով նաեւ վիրավորական արտահայտություններ: Ձեր արձագանքը ո՞րն է:

-Երբ երկրի ղեկավարի պաշտոնը զբաղեցնող մարդը նման բառապաշարով է խոսում, դա առաջին հերթին նրա ներքին վիճակի ու քաղաքական մակարդակի ցուցիչն է: Մարդ, ով արտաքին քաղաքական դաշտում զիջումների է գնացել, երկրի ներսում փորձում է ագրեսիվ պահվածքով ուժ ցուցադրել: Բայց հասարակությունը շատ լավ տեսնում է իրականությունը: Այս ամենը ոչ թե ուժի, այլ ներքին անհավասարակշռության դրսեւորում է: Ցավալի է, որ արդեն երկար տարիներ Հայաստանը ղեկավարում է նման վարքագիծ ունեցող մարդ:

-Դուք տեսե՞լ եք այն տեսանյութը, որտեղ Նիկոլ Փաշինյանը վիճում էր տարեց կնոջ հետ, ինչպես նաեւ արցախցիներին ուղղված նրա հայտարարությունները:

-Այո՛, տեսել եմ: Առաջին հերթին ուզում եմ աջակցություն հայտնել այդ կնոջը: Նա ընդամենը իր ցավն ու դժգոհությունն էր արտահայտում՝ կապված անհետ կորած հարազատի հետ: Բայց փոխանակ պատասխան տալու՝ իշխանությունը կրկին փորձեց թեման շեղել ու ամեն ինչ տեղափոխել արցախցիների վրա: Սա արդեն սովորական ձեռագիր է դարձել: Երբ ուղիղ պատասխան չունեն, սկսում են պիտակավորել, մեղավորներ փնտրել, մարդկանց իրար դեմ հանել:

- Իշխանությունները մշտապես խոսում են ատելության խոսքի դեմ պայքարի մասին, բայց իրենց խոսքում հաճախ հնչում են վիրավորանքներ ու սպառնալիքներ: Ինչպե՞ս եք գնահատում այս հակասությունը:

- Սա բացարձակապես անհամատեղելի է ժողովրդավարության հետ: Չի կարող մարդը մի կողմից խոսել հանդուրժողականությունից, մյուս կողմից՝ քաղաքական հակառակորդներին «սատկացնելու», «փռելու» կամ այլ նման բառերով սպառնալ: Դա ոչ միայն քաղաքական մշակույթի, այլ նաեւ պետական մտածողության խնդիր է: Հասարակությունը պետք է հասկանա՝ սա ա՞յն օրինակն է, որով ցանկանում ենք երեխաներ մեծացնել, թե՞ ոչ:

- Նիկոլ Փաշինյանը կրկին խոսեց հիբրիդային պատերազմի մասին եւ ակնարկեց, որ որոշ քաղաքական ուժեր արտաքին ազդեցության տակ են: Ձեր կարծիքով՝ ձեզ եւս այդպե՞ս են ներկայացնում:

- Բնականաբար ո՛չ: Բայց ամենամեծ ողբերգությունն այն է, որ հենց Նիկոլ Փաշինյանի քաղաքականությունն է բերել Հայաստանին այս վիճակին: Եթե խոսում ենք արտաքին ազդեցությունների մասին, ապա պետք է հասկանալ՝ ցանկացած մեծ պետություն ունի իր շահերը տարածաշրջանում: Խնդիրն այն է, թե ինչպես է հայկական իշխանությունը վարում այդ հարաբերությունները: Այս իշխանությունը ոչ թե հավասարակշռում է շահերը, այլ հակադրում է տարբեր կենտրոնների՝ վտանգելով Հայաստանի անվտանգությունը:

- Փաշինյանը նաեւ ակնարկեց, որ հնարավոր է՝ ընտրությունները չկայանան կամ «այլ զարգացումներ» լինեն: Ինչպե՞ս եք դա մեկնաբանում:

- Երբ մարդը հասկանում է, որ հասարակության աջակցությունը կորցնում է, սկսում է սպառնալիքների լեզվով խոսել: Ինքը շատ լավ գիտի, թե ինչ հետեւանքներ են ունեցել իր որոշումները՝ հազարավոր զոհեր, կորցրած հայրենիք, խոր ճգնաժամ: Հասկանալի է, որ նա ամեն ինչ անելու է իշխանությունը պահելու համար: Բայց վերջնական որոշողը ժողովուրդն է: Եթե հասարակությունը հստակ կամք ցուցաբերի, որեւէ սպառնալիք չի աշխատի:

- Եթե Նիկոլ Փաշինյանը չվերընտրվի, Ձեր կարծիքով՝ նա խաղաղ կհեռանա՞ քաղաքականությունից:

- Կարծում եմ՝ նա առաջին հերթին մտածելու է սեփական պատասխանատվությունից խուսափելու մասին: Բայց անկախ ամեն ինչից, կարեւոր է, որ Հայաստանում իշխանափոխությունները լինեն օրենքի ու ժողովրդի կամքի շրջանակում: Մեր պետությունը այլեւս չի կարող դիմանալ նոր ցնցումների:

Զրուցեց՝ ԻՐԻՆԱ ԱՏԱՆՅԱՆԸ

ԱՀԱՋԱՆԳ

ArmLur.am-ը խաղաքաղաքացիներից ահազանգեր է ստանում, որ իրենց հեռախոսահամարներին կարճ հաղորդագրություններ են ուղարկվում՝ հղումով դեպի հակակոռուպցիոն բովանդակություն ունեցող կայք:

ArmLur.am-ին փոխանցված սքրինշոթից երեւում է, որ հաղորդագրությունը ստացվել է The-RA-ACC անվամբ ուղարկողից: SMS-ում նշվում է, որ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն հետամուտ է քննության առարկա դարձած դեպքերի բացահայտմանը եւ հիշեցվում է, որ քննության ընթացքը ստանալու համար սահմանված է 7 տարի ժամկետ: Հաղորդագրության վերջում առկա է հղում՝ anticorruption.am կայքին:

Առաջին հայացքից սա կարող է ընկալվել որպես պետական մարմնի իրազեկման արշավ: Սակայն այստեղ առաջանում է մի կարեւոր եւ սկզբունքային հարց. ինչպե՞ս եւ ի՞նչ իրավական հիմքով են քաղաքացիների հեռախոսահամարները հայտնվել այդ հաղորդագրություններն ուղարկող համակարգում: Եթե SMS-ները ուղարկվում են պետական մարմնի կամ պետական մարմնի պատվերով գործող կազմակերպության կողմից, ապա անհրաժեշտ է պարզել՝ արդյոք տվյալների մշակման համար եղել է օրինական հիմք, արդյոք քաղաքացիները տվել են իրենց համաձայնությունը, եւ արդյոք պահպանվել են անձնական տվյալների պաշտպանության մասին օրենքով սահմանված պահանջները:

Խնդիրն առավել զգայուն է այն պատճառով, որ խոսքը ոչ թե սովորական գովազդային հաղորդագրության, այլ պետական մարմնի անունից ուղարկվող բովանդակության մասին է: Նման դեպքերում քաղաքացին պետք է հստակ իմանա՝ ով է մշակել իր հեռախոսահամարը, ինչ աղբյուրից է այն ձեռք բերվել, ինչ նպատակով է օգտագործվում եւ արդյոք ինքը կարող է հրաժարվել նման հաղորդագրություններ ստանալուց: Հակառակ դեպքում ստացվում է իրավիճակ, երբ պետական մարմնի անունից քաղաքացիների հետ կապ է հաստատվում՝ առանց նրանց համար պարզ դարձնելու, թե անձնական տվյալների օգտագործման շղթան որտեղից է սկսվում եւ ով է դրա համար պատասխանատու:

Ի՞նչ իրավական հիմքով են ուղարկվում այս SMS-ները, ո՞ր տվյալների բազայից են վերցվել քաղաքացիների հեռախոսահամարները, ո՞վ է իրականացրել հաղորդագրությունների տեխնիկական ուղարկումը, եւ արդյո՞ք քաղաքացիների համաձայնությունը ստացվել է: Մինչ այդ քաղաքացիների շրջանում շարունակում է քննարկվել գլխավոր հարցը. եթե պետական մարմինը կարող է քաղաքացիներին նման SMS ուղարկել, ապա արդյո՞ք քաղաքացիների անձնական տվյալները պատշաճ պաշտպանված են, թե՞ դրանք օգտագործվում են առանց բավարար թափանցիկության:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Հունիսի 7-ին Հայաստանում կայանալիք համապետական ընտրությունների նկատմամբ միջազգային հետաքրքրությունն օրեցօր մեծանում է: ՀՀ-ում սպասվող քաղաքական գործընթացներին ուշադիր հետեւում են թե՛ հարեւան Թուրքիան եւ Ադրբեջանը, թե՛ Ռուսաստանն ու արեւմտյան կենտրոնները:

Ադրբեջանական կողմից վերջին շրջանում հնչել են հայտարարություններ, որոնց հիմնական շեշտադրումն այն է, որ Հայաստանում իշխանության չպետք է գան «ռեւանշիստական տրամաբանություն» կրող քաղաքական ուժեր: Բացի այդ, Բաքուն բացահայտ աջակցություն է հայտնել ՀՀ գործող իշխանություններին՝ դա կապելով տարածաշրջանում խաղաղության օրակարգի առաջմղման եւ հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման հետ:

Հայաստանում սպասվող ընտրությունները ուշադրության կենտրոնում են նաեւ Եվրոպական միության համար: Վերջին ամիսներին եվրոպացի պաշտոնյաների՝ Հայաստան կատարած այցերի, ինչպես նաեւ Երեւանում հնչեցված քաղաքական գնահատականների համատեքստում փորձագետները չեն բացառում, որ եվրոպական շրջանակները եւս ավելի դրական վերաբերմունք ունեն գործող իշխանությունների նկատմամբ:

Հայաստանի ներքաղաքական զարգացումների նկատմամբ ակտիվ հետաքրքրություն է ցուցաբերում նաեւ Ռուսաստանը: Վերջին շրջանում ՌԴ տարբեր պաշտոնյաների կողմից հնչող հայտարարություններում հաճախ կարելի է նկատել ակնարկներ, որոնք հայ հասարակությանը կոչ են անում զգոն եւ սթափ գնահատել ստեղծված իրավիճակը՝ նախքան ընտրություն կատարելը: Այդ հայտարարություններից վերջինը հնչել է Ռուսաստանի Դաշնության Անվտանգության խորհրդի քարտուղար Սերգեյ Շոյգուի կողմից: Նա նշել է, որ 20-րդ դարի վերջին տարիներին Ռուսաստանի գործադրած ջանքերի շնորհիվ Հայաստանին հաջողվել է պահպանել իր ինքնիշխանությունը: ՌԴ Անվտանգության խորհրդի հատուկ աշխատանքային խմբի նիստում Շոյգուն ընդգծել է նաեւ, որ Մոսկվայի աջակցությունը կարեւոր դեր է ունեցել Հայաստանը էներգետիկ շրջափակումից դուրս բերելու հարցում: Ռուսաստանցի պաշտոնյան առանձնահատուկ ընդգծել է հայ եւ ռուս ժողովուրդների միջեւ ձեւավորված դարավոր հարաբերությունները՝ նշելով, որ երկու ժողովուրդներին միավորում են ինչպես պատմական բարեկամությունը, այնպես էլ օտար նվաճողների դեմ մղված համատեղ պայքարի փորձը: Նրա խոսքով՝ հենց այդ պատմական կապերն ու ձեւավորված ավանդույթներն են հիմք հանդիսացել երկկողմ հարաբերությունների համար, որոնք կարեւոր դեր են խաղացել նաեւ Հայաստանի նորագույն պատմության ամենաբարդ փուլերում:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿ

ՆԱԽԱԳԻԾԸ

ArmLur.am-ը պարզեց, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը նախընտրական քարոզարշավի ընթացքում արդեն խոստացել էր վարորդական իրավունքից զրկված քաղաքացիների համար ներդնել վերականգնման նոր, ավելի մեղմ պայմաններով համակարգ, իսկ այժմ այդ խոստումը ձեւակերպվել է օրենսդրական նախաձեռնության տեսքով եւ դրվել հանրային քննարկման: Հիշեցնենք, որ նախքան սա Փաշինյանը իր ֆեյսբուքյան էջում էլ էր քվեարկություն արել:

ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից ներկայացված «Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում փոփոխությունների եւ լրացումների փաթեթով առաջարկվում է փոխել վարելու իրավունքից զրկված քաղաքացիների վերականգնման գործող մոդելը՝ ներդնելով փորձաշրջանի համակարգ եւ սահմանափակ միավորների սկզբունք: Նախագծով նախատեսվում է, որ վարելու իրավունքից զրկված անձինք, զրկման ժամկետի ավարտից հետո մեկ տարվա ընթացքում դիմելու դեպքում, կարող են մեկ անգամ վերականգնել իրենց վարորդական իրավունքը առանց որակավորման քննությունների՝ 50 հազար դրամ պետական տուրքի վճարմամբ եւ 1 տարվա փորձաշրջանով: Այդ ընթացքում վարորդներին կտրվի 6 տուգանային միավոր՝ գործող 13-ի փոխարեն: Եթե փորձաշրջանի ընթացքում սպառվի տրամադրված 6 միավորը, վարորդը կրկին կզրկվի վարելու իրավունքից՝ մեկ տարվա ժամկետով: Երկրորդ եւ հաջորդ դեպքերում վերականգնումը հնարավոր կլինի միայն քննություններ հանձնելու միջոցով: Նախագծում նաեւ ընդգծվում է, որ նոր կարգավորումները կտարածվեն նաեւ 2020 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2026 թվականի մայիսի 1-ը վարելու իրավունքից զրկված քաղաքացիների վրա՝ մեկանգամյա վերականգնման հնարավորությամբ: Փաստաթղթի հիմնավորման մեջ նշվում է, որ գործող համակարգը բավարար արդյունավետ չի ապահովում վարքագծի փոփոխության վերահսկման առումով, եւ նոր մոդելի նպատակն է վարորդների ռեաբիլիտացիան՝ ավելի խիստ վերահսկվող փորձաշրջանի միջոցով: Միաժամանակ նշվում է, որ նախագծի ընդունմամբ պետական բյուջեի եկամուտների կամ ծախսերի էական փոփոխություն չի նախատեսվում, իսկ կարգավորումները մշակվել են ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից:

ArmLur.am-ը պարզեց նաեւ, որ նախաձեռնությունը կապվում է վարչապետ Նիկոլ Փաշինյանի նախընտրական քարոզարշավի ընթացքում հնչեցված խոստման հետ, որով նա հայտարարել էր վարորդական իրավունքների վերականգնման պարզեցված համակարգի ներդրման մասին:

Ներկայում նախագիծը դրվել է հանրային քննարկման:

ՄԻԼԻՈՆՆԵՐ

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ԱՄԵՆԱՇԱՏ ԳՈՒՄԱՐ ԾԱԽՍՈՂՆԵՐԸ

ArmLur.am-ն ուսումնասիրել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հրապարակած Ազգային Ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունների եւ կուսակցությունների դաշինքների կազմում ընդգրկված կուսակցությունների բանկային հաշիվների ֆինանսական միջոցների մնացորդի, մուտքերի եւ ելքերի վերաբերյալ տեղեկանքը՝ 2026 թվականի մայիսի 12-14-ն ընկած ժամանակահատվածի համար:

Հրապարակված տվյալներից պարզ է դառնում, որ ֆինանսական ամենամեծ հոսքերը գրանցվել են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության, «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցության եւ «Ուժեղ Հայաստան» կուսակցության հաշվեհամարներում:

Ամենամեծ նվիրատվությունները ստացել է «Քաղաքացիական պայմանագիր»-ը՝ 95 մլն 650 հազար 959 դրամ՝ 153 անձից, իսկ կուսակցությունը նախընտրական հիմնադրամ է փոխանցել 150 մլն դրամ: ՀՅԴ-ն ստացել է 69 մլն դրամ նվիրատվություն՝ 34 անձից եւ նախընտրական հիմնադրամ է փոխանցել 100 մլն դրամ:

«Ուժեղ Հայաստան»-ը ստացել է 47 մլն 583 հազար դրամ նվիրատվություն՝ 37 անձից եւ 80 մլն դրամ փոխանցել նախընտրական հիմնադրամ:

Ըստ հրապարակված տվյալների՝ «Ռեֆորմիստների» կուսակցության հաշվին նշված ժամանակահատվածում մուտք եւ ելք չի արձանագրվել, իսկ բանկային հաշվի մնացորդը կազմել է 103 հազար դրամ:

«Բոլորին դեմ եմ» ժողովրդավարական կուսակցությունը ստացել է 100 հազար դրամ նվիրատվություն մեկ անձից, ելքեր չի ունեցել, իսկ մնացորդը կազմել է 201 հազար դրամ:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ստացել է 95 մլն 650 հազար 959 դրամ նվիրատվություն՝ 153 անձից, 604 հազար 580 դրամ անդամավճար՝ 62 անձից, ինչպես նաեւ 1 մլն 784 հազար 919 դրամ այլ մուտք՝ սխալ փոխանցված գումարի վերադարձից: Կուսակցությունը կատարել է 27 մլն 297 հազար դրամ գույքի վարձակալության վճարներ՝ 179 փոխանցմամբ՝ Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու եւ Վայոց ձորի տարածքային գրասենյակների համար, ընդ որում՝ 171 փոխանցման դեպքում հասցեները նշված չեն եղել: Բացի այդ, վճարվել է 100 հազար դրամ տրանսպորտային ծախսերի, 183 հազար 810 դրամ ապրանքանյութական արժեքների ձեռքբերման, 1 հազար 667 դրամ ԱԱՀ-ի եւ 247 հազար 901 դրամ կոմունալ վճարների համար: «Քաղաքացիական պայմանագիր»-ը նաեւ կատարել է 150 մլն 603 հազար 598 դրամ այլ ելք, որից 150 մլն դրամը փոխանցվել է նախընտրական հիմնադրամ՝ երեք փոխանցմամբ: Մնացորդը կազմել է 50 մլն 547 հազար 943 դրամ:

«Ուժեղ Հայաստան» կուսակցությունը ստացել է 47 մլն 583 հազար դրամ նվիրատվություն՝ 37 անձից, ինչպես նաեւ 160 հազար 892 դրամ այլ մուտք՝ սխալ փոխանցված գումարի վերադարձից, որից 49 հազար 602 դրամը վերադարձվել է Ֆեյսբուքից: Կուսակցությունը կատարել է 830 հազար դրամ աշխատավարձային եւ քաղաքացիաիրավական պայմանագրերով վճարներ՝ 4 փոխանցմամբ, 85 մլն 529 հազար 192 դրամ այլ ելք, որից՝ 3 մլն 829 հազար 192 դրամը՝ ֆեյսբուքյան գովազդի, 80 մլն դրամը՝ նախընտրական հիմնադրամ փոխանցման, 1 մլն 500 հազար դրամը՝ կանխավճարի, 200 հազար դրամը՝ հաշիվ-ապրանքագրի հիման վրա: Բացի այդ, 459 հազար 677 դրամ վճարվել է Գեղարքունիքում, Շիրակում եւ Երեւանում գտնվող 4 անշարժ գույքի վարձակալության համար, իսկ 87 հազար 700 դրամ՝ կոմունալ վճարների համար: Մնացորդը կազմել է 107 մլն 989 հազար 498 դրամ:

«Նոր դարաշրջան» կուսակցությունը մուտքեր եւ ելքեր չի ունեցել, իսկ մնացորդը կազմել է 4 մլն 512 հազար 284 դրամ:

«Միավորված հայեր» կուսակցությունը նշված ժամանակահատվածում բանկային հաշիվ չի ունեցել:

Հայաստանի շնորհապետական կուսակցությունը ստացել է 1 մլն 737 հազար դրամ նվիրատվություն՝ 10 անձից, ինչպես նաեւ 31 հազար 500 դրամ անդամավճար՝ 3 անձից: Կուսակցությունը 1 մլն 950 հազար դրամ փոխանցել է նախընտրական հիմնադրամ, իսկ մնացորդը կազմել է 1 մլն 17 հազար 15 դրամ:

«Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցությունը ստացել է 970 հազար դրամ նվիրատվություն՝ 4 անձից, 371 հազար դրամ ծախսել է TikTok-ի գովազդի համար, իսկ մնացորդը կազմել է 854 հազար 526 դրամ:

«Միասնության թեւեր» կուսակցությունը ստացել է 3 մլն դրամ այլ մուտք՝ նախընտրական հիմնադրամ փոխանցված գումարի վերադարձից: Ելքերը կազմել են 4 մլն 841 հազար դրամ, որից 2 մլն 500 հազար դրամը փոխանցվել է նախընտրական հիմնադրամ, իսկ 2 մլն 341 հազար դրամը՝ հաշիվ-ապրանքագրերով կատարված վճարներ: Մնացորդը կազմել է 506 դրամ:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը ստացել է 100 հազար դրամ այլ մուտք՝ սխալ փոխանցված գումարի վերադարձից: Կուսակցությունը 100 հազար դրամ վճարել է Մարալիկում վարձակալության համար, ինչպես նաեւ կատարել է 35 մլն 400 հազար դրամ այլ ելք, որից 30 մլն դրամը փոխանցվել է նախընտրական հիմնադրամ, իսկ 5 մլն 400 հազար դրամը՝ իրավաբանական ծառայությունների համար: Մնացորդը կազմել է 2 մլն 688 հազար 296 դրամ:

«Ազգային ժողովրդավարական բեւեռ» համահայկական կուսակցությունը ստացել է 1 մլն 600 հազար դրամ նվիրատվություն՝ 3 անձից, ինչպես նաեւ 200 հազար դրամ՝ նախընտրական հիմնադրամից վերադարձված գումար: Կուսակցությունը 1 մլն 802 հազար դրամ փոխանցել է նախընտրական հիմնադրամ, իսկ մնացորդը կազմել է 30 հազար 900 դրամ:

«Քոչարի ազգային վերածնունդ եւ ազգի զարթոնք» կուսակցության հաշվին որեւէ մուտք կամ ելք չի արձանագրվել, մնացորդը՝ 0 դրամ:

«Հայ ազգային կոնգրեսը» ստացել է 3 մլն դրամ նվիրատվություն՝ 7 անձից: Կուսակցությունը 7 մլն 900 հազար դրամ փոխանցել է նախընտրական հիմնադրամ՝ մայիսի 13-ին եւ 14-ին կատարված երկու փոխանցմամբ: Մնացորդը կազմել է 630 հազար 197 դրամ:

«Հանրապետություն» կուսակցությունը մուտքեր չի ունեցել, սակայն կատարել է 5 մլն 46 հազար 921 դրամ այլ ելք, որից 5 մլն դրամը փոխանցվել է նախընտրական հիմնադրամ, իսկ 44 հազար 921 դրամը՝ ֆեյսբուքյան գովազդի համար: Մնացորդը կազմել է 1 մլն 562 հազար 329 դրամ:

Քրիստոնեա-ժողովրդավարական կուսակցությունը ստացել է 220 հազար դրամ այլ մուտք՝ գումարի վերադարձից, ելքեր չի ունեցել, իսկ մնացորդը կազմել է 223 հազար 501 դրամ:

«Ալյանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցությունը մուտքեր եւ ելքեր չի ունեցել, մնացորդը կազմել է 39 հազար 820 դրամ:

«Ժողովրդավարական համախմբում» կուսակցությունը ստացել է 14 մլն 456 հազար դրամ նվիրատվություն՝ 5 անձից: Կուսակցությունը 10 մլն դրամ փոխանցել է նախընտրական հիմնադրամ, իսկ մնացորդը կազմել է 5 մլն 846 հազար դրամ:

«Դեմոկրատիա օրենք կարգապահություն» կուսակցությունը մուտքեր եւ ելքեր չի ունեցել, իսկ մնացորդը կազմել է 31 հազար 600 դրամ:

«Առաջ աջակենտրոն» կուսակցությունը ստացել է 7 մլն 500 հազար դրամ նվիրատվություն՝ 8 անձից, ինչպես նաեւ 500 հազար դրամ այլ մուտք՝ սխալ փոխանցված գումարի վերադարձից: Կուսակցությունը կատարել է 11 մլն 659 հազար 633 դրամ այլ ելք, որից 1 մլն 987 հազար 54 դրամը՝ ֆեյսբուքյան գովազդների, 9 մլն 516 հազար 129 դրամը՝ գովազդային ծախսերի համար: Բացի այդ, 2 մլն 800 հազար դրամ վճարվել է գույքի վարձակալության համար: Մնացորդը կազմել է 4 մլն 168 հազար 804 դրամ:

«Հանուն Հանրապետության ժողովրդավարության պաշտպանների դաշինք»-ը ստացել է 9 մլն դրամ նվիրատվություն՝ 3 անձից, ելքեր չի ունեցել, իսկ մնացորդը կազմել է 9 մլն 498 հազար 614 դրամ:

«Լուսավոր Հայաստան» կուսակցությունը ստացել է 500 հազար դրամ նվիրատվություն մեկ անձից, 202 հազար 335 դրամ ծախսել է ֆեյսբուքյան գովազդի համար, իսկ մնացորդը կազմել է 6 մլն 352 հազար 46 դրամ:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԿՄՆԱՆ 25-Ը

«Ինչպես գիտեք մենք հայտարարել էինք, որ մեր հաջողության դեպքում կազմելու ենք 100-օրյա կառավարություն, կատարենք մեր խոստացած երեք փոփոխությունները ու կազմակերպենք արտահերթ ընտրություններ: Իսկ դա անելու անհնարինության դեպքում չենք պատրաստվում բոլորին դեմ մարդկանց ձայներով հինգ տարի ընդդիմադիր պատգամավոր աշխատել եւ վայր ենք դնելու մեր մանդատները:

Հաշվի առնելով, որ մեծ թվով մանդատներ վայր դնելու պրոցեսը իրավական առումով երկարատեւ պրոցես է մենք գտել ենք իրավական մեխանիզմ դա երաշխավորելու նախօրոք: ԿԸՀ-ի հետ իրավական պարզաբանումներից հետո մեր ցուցակի 50 անդամ դուրս են եկել եւ եւս 12-ն էլ դուրս են գալու ցուցակից: Արդյունքում ցուցակում ունենալու ենք 25 թեկնածու. երաշխավորելով որ հարկ եղած դեպքում մենք կկարողանանք իրագործել եւ մեր նախատեսած փոփոխությունների, եւ մանդատները վայր դնելու ծրագիրը՝ առանց երկարատեւ ձգձգումների, ձեզ խոստացված ժամկետներում»,- հայտարարել է «Բոլորին դեմ եմ»-ը:

ԿՐԱԿՈՑՆԵՐ

ՄԱՆՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ԴՍՏԵՐ ՈՐԴԻՆ

Էջմիածնում կրակոցներ անձամբ արձակել է դանակից վիրավորված գեներալ Մանվել Գրիգորյանի դատավոր դստեր որդին: Գեներալ Մանվել Գրիգորյանի թոռների միջադեպի գործով ՀՀ քննչական կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ խուլիգանության դեպքի առթիվ, կատարվում է նախաքննություն, այս պահին քրեական գործով մեղադրյալ չկա: Էջմիածնի քոլեջի մոտ գեներալի թոռների եւ մի խումբ տղաների վեճը եղել է «աղջկա հարցով»:

Մայիսի 15-ին վիճաբանություն էր եղել եւ կրակոցներ էին հնչել Էջմիածնում: ArmLur.am-ը հայտնել էր, որ վիճաբանողների մեջ էին գեներալ Մանվել Գրիգորյանի թոռները՝ նախկին դատավոր Նաիրա Գրիգորյանի եւ վերջինիս եղբոր, Էջմիածնի նախկին քաղաքապետ Կարեն Գրիգորյանի որդիները. նրանց վնասվածքներ էին հասցրել:

ՆԳՆ-ն հայտնել էր, որ Վաղարշապատի համայնքային ոստիկանները բացահայտել են խուլիգանության դեպքը. հայտնաբերվել է հանցագործության գործիք մեկնարկային ատրճանակը: Մայիսի 14-ին՝ ժամը 10:40-ին, ՆԳՆ օպերատիվ կառավարման կենտրոնում հիվանդանոցից ահազանգ էր ստացվել, որ կտրածծկած վերքերով բուժօգնության էր դիմել Էջմիածնի բնակիչ 15-ամյա մի պատանի: Խուլիգանություն կատարելու կասկածանքով ձերբակալվել եւ բաժին էին տեղափոխվել Էջմիածինցի 18-ամյա երկու երիտասարդ: Պարզվել է, որ Կոտայքի մարզի Նոր Գեղի գյուղի բնակիչն ու նրա ընկերները Էջմիածնի Վազգեն Առաջինի փողոցում վիճաբանել են բուժօգնության դիմած եւ արդեն ձերբակալված երիտասարդների հետ, որի ընթացքում էլ Նոր Գեղիի բնակիչը դանակի մի քանի հարված է հասցրել 15-ամյա պատանուն, իսկ 18-ամյա Էջմիածինցին մեկնարկային ատրճանակով երկու անգամ կրակել է օդ:

Նախաձեռնվել է քրեական վարույթ խուլիգանության եւ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու հատկանիշներով:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՀՈՅԱՆՔՆԵՐ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Ա. Մովսեսյանը 2025 թվականի մայիսի 16-ին իր խափանման միջոցի հարցի որոշումը հրապարակելու ընթացքում, դժգոհ լինելով դատարանի կայացրած որոշման արդյունքից, դատարանի նկատմամբ ցուցաբերել է անհարգալից վերաբերմունք: Մովսիսյանը անհարգալից վերաբերմունք է դրսեւորել դատական նիստերի դահլիճում ներկա գտնվող երրորդ անձանց ներկայությամբ, դատավարության մասնակից, հանրային մեղադրող Մհեր Եսայանի, ինչպես նաեւ դատավոր Արման Բաբախանյանի հասցեին՝ «սրանց փորիցը հոգի չկա», «ձեր զակազները, պատվերները բկներիդա կայնելու» վիրավորական արտահայտություններ կատարելով: Մովսիսյանը անպարկեշտության հարաբերականորեն բարձր աստիճանի սեռական բնույթի հայհոյանքներ է հնչեցրել, նրա գործողությունների արդյունքում խախտվել է արդարադատություն իրականացնող մարմնի՝ դատարանի նորմալ, բնականոն գործունեությունը, վնասվել է արդարադատության հեղինակությունը եւ դատավարությանը մասնակցող անձանց պատիվն ու արժանապատվությունը:

Նկատենք, որ սա առաջին դեպքը չէ, որ Արմավիրի դատարանում դատավոր Արման Բաբախանյանի վարույթում քննվող քրեական գործով ուշագրավ միջադեպեր են արձանագրվում: 2025 թվականի սեպտեմբերին Ա. Բաբախանյանը Արմեն Սիմոնյանի մասով կայացրել է մեղադրական վերդիկտ եւ նույն օրը նշանակել լրացուցիչ դատալսումներ: Լրացուցիչ դատալսումների ընթացքում, օրենքով նախատեսված հարցերի քննարկումն ավարտելուց հետո, դատավոր Արման Բաբախանյանը դատավճիռ կայացնելու համար հեռացել է առանձին սենյակ, որտեղից վերադառնալուց հետո՝ նույն օրը՝ ժամը 18:15-ի սահմաններում, մեղադրական դատավճիռ կայացվելու հանգամանքից, դատական նիստերի քարտուղարի, կարգադրիչների եւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության ուղեկցող դասակի աշխատակիցների ներկայությամբ սեռական բնույթի հայհոյանքներ է հնչեցրել դատավոր Արման Բաբախանյանի եւ վերջինիս ընտանիքի անդամների հասցեին՝ այդ կերպ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելով դատարանի նկատմամբ, որը դրսեւորվել է պաշտոնական լիազորությունների իրականացման առնչությամբ դատավոր Արման Բաբախանյանին վիրավորելով:

Ք. Մ.

ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ Է 2 ԱՄՍՈՎ

ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչությունում իրականացվող քրեական վարույթի նախաքննությամբ առերեւույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ Ա.Օ.-ն 2026 թվականի մարտի 22-ին տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ՝ Ֆեյսբուքի իր օգտահաշվի միջոցով, քաղաքական հայացքներով պայմանավորված շարժառիթով, կատարել է հրապարակային գրառումներ՝ այդ կերպ ՀՀ վարչապետի հասցեին ուղղակի դիտավորությամբ հնչեցնելով բռնություն գործադրելու հրապարակային կոչեր:

Բացի այդ, Ա.Օ.-ն, տեղեկանալով ՀՀ վարչապետի եւ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության այլ անդամների կողմից 2026 թվականի մայիսի 18-ին Արաբկիր վարչական շրջանում իրականացվելիք նախընտրական քարոզչության մասին, վերջիններիս նախընտրական քարոզչություն կատարելուն խոչընդոտելու նպատակով՝ Ֆեյսբուքի իր անձնական օգտահաշվում հրապարակում կատարելուց հետո ժամանել է Արաբկիր վարչական շրջանի Վրացական 7 շենքի բակ եւ օգտագործելով քարոզչության հրապարակային բնույթը, տեղում հավաքված մեծաթիվ քաղաքացիների առկայությունը՝ խոչընդոտել է նախընտրական քարոզչության բնականոն ընթացքը:

Այնուհետեւ, Ա.Օ.-ն հասարակության նկատմամբ դրսեւորել է բացահայտ անհարգալից, իրավական ու բարոյական նորմերի նկատմամբ արհամարհական վերաբերմունք, այն է՝ հնչեցրել է հայհոյանքներ եւ անպարկեշտ արտահայտություններ՝ անտեսելով հավաքվածների կողմից համակեցության կանոնները հարգելու եւ պահպանելու հորդորները, խաթարել է հասարակական կարգը:

Քրեական վարույթի նախաքննության ընթացքում Ա.Օ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 330-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը, ինչպես նաեւ այդ նպատակով նյութեր կամ առարկաներ տարածելը), 297-րդ հոդվածի 1-ին մասով (խուլիգանությունը) եւ 211-րդ հոդվածի 1-ին մասով (քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելը կամ քարոզչություն կատարելուն այլ կերպ խոչընդոտելը): Ա.Օ.-ն կալանավորվել է:

1 ՀՈԴԱՄԱՍ

ՎԵՐԱԴԱՐՁՎԵԼ Է ՀԱՄԱՅՆՔԻՆ

Գլխավոր դատախազությունը 2025 թվականի մարտի 11-ին հայցադիմում էր ներկայացրել Հակակոռուպցիոն դատարան՝ ընդդեմ ֆիզիկական անձի, երրորդ անձ՝ Տավուշի մարզի Իջեւան համայնքի՝ Իջեւանի Թատերական փողոցի 9 հասցեում գտնվող՝ 208 քմ մակերեսով հողամասի նկատմամբ կառուցապատման իրավունքը դադարեցնելու պահանջով: Հակակոռուպցիոն դատարանի՝ 2026 թվականի հունվարի 19-ի վճռով՝ բավարարվել էր Գլխավոր դատախազության հայցը: Վճռով դադարեցվել էր Իջեւան քաղաքի Թատերական փողոցի 9 հասցեում գտնվող՝ 208 քմ մակերեսով հողամասի նկատմամբ ֆիզիկական անձի կառուցապատման իրավունքը: Հակակոռուպցիոն դատարանի նշված վճիռը ստացել է օրինական ուժ: Գլխավոր դատախազության դիմումի հիման վրա՝ Կադաստրի կոմիտեն 2026 թվականի մայիսի 20-ին դադարեցրել է հողամասի նկատմամբ ֆիզիկական անձի կառուցապատման իրավունքը. հողամասը վերադարձվել է Իջեւան համայնքին: Հողամասի՝ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը՝ 1 միլիոն 366 հազար դրամ: Այսպիսով, մինչ այսօր Իջեւան համայնքին են վերադարձվել Տավուշի մարզի Իջեւան համայնքի քաղաքային զբոսայգու հետեւյալ գույքերը՝

-Թատերական փողոցի 9 հասցեում գտնվող՝ 208 քմ մակերեսով հողամասը,

-Վալանսի փողոց թիվ 1/30 հասցեում գտնվող՝ 0.04 հա մակերեսով հողամասը,

-Թատերական փողոց 18 հասցեում գտնվող՝ 19 քմ մակերեսով հողամասը,

-Թատերական փողոցի 18/7 հասցեում գտնվող՝ 350.1 քմ մակերեսով հողամասը,

-Թատերական փողոցի 18/5 հասցեում գտնվող՝ 19.8 քմ մակերեսով հողամասը,

-Անկախության փողոց 1/55 հասցեում գտնվող՝ 436 քմ մակերեսով հողամասը,

-Վալանսի փողոցի 1/29 հասցեում գտնվող՝ 0.06 հա մակերեսով հողամասը,

-Անկախության փողոց 1/62 հասցեում գտնվող՝ 0.001 հա մակերեսով հողամասը,

-Անկախության 1/54 հասցեում գտնվող՝ 436.8 քմ մակերեսով հողամասը,

-Անկախության 1/41 հասցեում գտնվող՝ 1500 քմ մակերեսով հողամասը,

-Թատերական փողոցի 18/6 հասցեում գտնվող՝ 0.03 հա մակերեսով հողամասը,

-Վալանսի փողոցի 1/27 հասցեում գտնվող՝ 0.03 հա մակերեսով հողամասը,

-Վալանսի փողոցի 1/28 հասցեում գտնվող՝ 351 քմ մակերեսով հողամասը,

-Թատերական 18/3 հասցեում գտնվող՝ 18 քմ մակերեսով հողամասը:

-Թատերական 18/2 հասցեում գտնվող՝ 12 քմ մակերեսով հողամասը:

Բացի այդ, դատախազական ներգործության արդյունքում՝ Իջեւան համայնքի տիրապետմանն ու օգտագործմանն է վերադարձվել քաղաքային զբոսայգու շատրվաններին հարակից 0.03 հա մակերեսով հողամասը:

● *Անցած 1 օրում գրանցվել է 11 ավտովթար. 1 մարդ զոհվել է, 11-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼ ԵՆ

2024թ. հուլիսին Դիլիջանի պետական քոլեջը եւ Դիլիջանի բժշկական քոլեջը միավորվեցին, միավորված Դիլիջանի բազմագործառութային պետական քոլեջի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակվեց Վահագն Հովհաննիսյանը, ով մինչ այդ Դիլիջանի պետական քոլեջի տնօրենն էր: Միավորման գործընթացը բարդ էր, սակայն Վ. Հովհաննիսյանը կարողացավ այն իրականացնել առանց բարդությունների. ոչ մի աշխատող չկրճատվեց, բողոքներ չեղան: Քոլեջների միավորումից հետո քոլեջի կառավարման խորհուրդը պետք է նիստ հրավիրեր, տնօրենի մրցույթ անցկացներ: Սակայն քոլեջի կառավարման խորհրդի նախագահ, Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը նիստ չի հրավիրել: Երկար ձգձգումներից հետո 2025թ. հունվարին քոլեջի կառավարման խորհուրդը նշանակել է քոլեջի տնօրենի ընտրություն, տնօրենի միակ թեկնածուն եղել է Վ.Հովհաննիսյանը: Սակայն մրցույթը չի կայացել, քանի որ լիազոր մարմնի՝ ԿԳՄՍ նախարարության ներկայացուցիչը չի ներկայացել: Նախարարությունից հայտնել են, որ իրենց ներկայացուցիչը չի ներկայացել, որովհետեւ ծանրաբեռնված է: Դրանից հետո պարբերաբար քոլեջի տնօրենի թափուր հաստիքի համար մրցույթներ են հայտարարվել, որոնք չեն կայացել՝ նախարարության ներկայացուցչի չներկայանալու պատճառով: Վ. Հովհաննիսյանը 9 ամիս ընդունելություն է խնդրել ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանից, սակայն ընդունելության չի արժանացել: 2025թ. հուլիսին ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը ընդունել է Վ. Հովհաննիսյանին, հայտնել, որ նրան քոլեջի տնօրենի թեկնածու չի դիտարկում, քանի որ ներքին խողովակներից իմացել է, որ Վ.Հովհաննիսյանը կրթության որակ չի ապահովում: Ա. Սվաջյանը Վ.-Հովհաննիսյանից պահանջել է պաշտոնից ազատվել, սակայն Հովհաննիսյանն ազատման դիմում չի գրել:

2025թ. նոյեմբերին Վ. Հովհաննիսյանը նամակ է ուղարկել վարչապետ Նիկոլ Փաշինյանին, որտեղ հայտնել է քոլեջում կատարվածը, նշել նաեւ քոլեջի շենքի վիճակը. «Քոլեջի կոմունիկացիաները գտնվում են անմխիթար վիճակում, ջեռուցում չկա, մեծ ծախսեր պահանջող վերանորոգման խնդիրներ կան»: Քոլեջի աշխատակիցները կարծում են, որ ԿԳՄՍ նախարարությունը 2 տարի օգտագործել է Վ.Հովհաննիսյանի ներուժը, որպեսզի միավորումից ձեւավորված քոլեջի աշխատանքը հունի մեջ ընկնի ու դրանից հետո իրենց թեկնածու այլ անձի տնօրեն նշանակեն: 2026թ. ապրիլին Դիլիջանի բազմագործառութային քոլեջում ոչ պլանային տեսչական ստուգումներ են իրականացվել,ոչ էական խախտումների համար մայիսի 13-ին Վ.Հովհաննիսյանին պաշտոնից ազատել են: Իսկ մինչ այդ՝ մայիսի 7-ին, Դիլիջան համայնքի ավագանին հավանություն է տվել Դիլիջանի բազմագործառութային քոլեջի շենքի հիմնանորոգման նախատեսվող գործունեությանը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՁԱԳԱՆՔԵԼ Է

ԱՆՎԱՆԵԼ Է «ՖԵՅՔ» ԵՎ «ՀԱԿԱՌՈՒՄԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ»

Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը խիստ քննադատության է ենթարկել The Insider պարբերականի վերջին հրապարակումը, որը վերաբերում էր Հայաստանում allegedly գործող ռուսական հատուկ ծառայությունների ներկայացուցիչներին:

Մայիսի 19-ին հրապարակված նյութում պարբերականը պնդում էր, թե Ռուսաստանի ԱԴԾ-ի, ԳՀՎ-ի եւ Արտաքին հետախուզության ծառայության գործակալներ են ուղարկվել Հայաստան՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանի դեմ գործողություններ համակարգելու նպատակով: ՌԴ ԱԳՆ-ն հայտարարում է, որ հոդվածը «բացահայտ սուտ եւ կազմակերպված սադրանք» է, որի նպատակը ռուս դիվանագետների նկատմամբ հոգեբանական ճնշում գործադրելն ու Հայաստանի հասարակությանը ընտրություններից առաջ վախեցնելն է:

Գերատեսչության հայտարարության մեջ նշվում է, որ հրապարակման հեղինակները թույլ են տվել բազմաթիվ փաստական սխալներ եւ անճշտություններ՝ հիմնվելով «անանուն աղբյուրների», կասկածելի «սքրինշոթների» եւ հակառուսական դիրքորոշմամբ հայտնի օտարերկրյա լրատվամիջոցների վրա: Ըստ Մոսկվայի՝ նյութում բացակայում է որեւէ համոզիչ ապացույց այն մեղադրանքների վերաբերյալ, թե Ռուսաստանը համակարգում է հակափաշինյանական արշավ կամ փորձում է ազդել ընտրությունների արդյունքների վրա: ՌԴ ԱԳՆ-ն անդրադարձել է նաեւ Երեւանում գործող Ռուսական տանը, որի գործունեությունը The Insider-ը ներկայացրել էր որպես «փափուկ ուժի» գործիք: Մոսկվան ընդգծել է, որ մշակութային, կրթական եւ հումանիտար ծրագրերի իրականացումը Ռուսաստանի արտասահմանյան մշակութային կենտրոնների բնականոն գործունեությունն է: Հայտարարության մեջ նշվում է, որ Ռուսաստանին եւ հայ-ռուսական հարաբերությունների զարգացմանն ուղղված ցանկացած գործունեություն ներկայացվում է որպես «հատուկ ծառայությունների օպերացիա», մինչդեռ խոսքը սովորական դիվանագիտական աշխատանքի մասին է՝ շփումների պահպանում, մշակութային միջոցառումներ, հումանիտար ծրագրեր եւ վերլուծական գործունեություն:

Ռուսական կողմը մտահոգություն է հայտնել նաեւ այն առնչությամբ, որ Հայաստանի ընդդիմադիր գործիչների եւ հասարակական դեմքերի ցանկացած շփում Ռուսաստանի հետ ներկայացվում է որպես համագործակցություն ռուսական հատուկ ծառայությունների հետ: Ըստ ԱԳՆ-ի՝ այդ կերպ հայկական հասարակությանը պարտադրվում է պարզունակ մոտեցում՝ «իշխանությունների քննադատությունը հավասար է Մոսկվայի գործակալ լինելուն»: Մոսկվան պնդում է, որ իրական միջամտությունը Հայաստանի նախընտրական դիսկուրսին ոչ թե Ռուսաստանի դիվանագիտական գործունեությունն է, այլ նման հրապարակումները, որոնք, ըստ հայտարարության, «հիստերիա են հրահրում հայկական եւ միջազգային տեղեկատվական դաշտում»:

ՌԴ ԱԳՆ-ն նաեւ մեղադրել է եվրոպական կառույցներին՝ պնդելով, որ «ժողովրդավարության աջակցությանը» հատկացվող միջոցների զգալի մասը ծախսվում է հակառուսական օրակարգ առաջ մղող մեդիա հարթակների ֆինանսավորման վրա: Հայտարարության մեջ հիշատակվում է նաեւ«բրյուսելյան արագ արձագանքման խումբը», որը, ըստ Մոսկվայի, ժամանել է Հայաստան՝ Ռուսաստանի վարկաբեկման եւ հայ-ռուսական հարաբերություններին վնաս հասցնելու նպատակով:

ՌԴ ԱԳՆ-ն պնդում է, որ Հայաստանում կիրառվում է «մոլդովական սցենարը»՝ Ռուսաստանին թշնամական միջավայրում ներկայացնելու եւ տեղեկատվական դաշտը «ռուսական ազդեցությունից մաքրելու» համար: Ռուսաստանը հիշեցրել է, որ The Insider-ը Ռուսաստանում ճանաչվել է «օտարերկրյա գործակալ» եւ «անցանկալի կազմակերպություն»:

Ըստ Մոսկվայի՝ Երեւանում «ռուսական գործակալների» վերաբերյալ հրապարակումը Ռուսաստանի ազդեցությունը Հարավային Կովկասից դուրս մղելու լայն արշավի մաս է: ՌԴ ԱԳՆ-ն զարմանք է հայտնել նաեւ այն կապակցությամբ, որ Հայաստանի որոշ բարձրաստիճան պաշտոնյաներ The Insider-ին ներկայացրել են որպես «ազդեցիկ ռուսական ռեսուրս» եւ անմիջապես ընդունել հրապարակման թեզերը որպես ճշմարտություն: Հայտարարության ավարտին ռուսական կողմը վստահություն է հայտնել, որ «հայ ժողովուրդը թույլ չի տա իրեն խաբել»:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

ՆԳՆ ոստիկանությունը հայտնում է, որ Հանրապետության օրվան նվիրված միջոցառումների մասնակիցների անվտանգությունն ապահովելու նպատակով մայիսի 25-ից 28-ը մի շարք փողոցներում նախատեսված են երթեւեկության սահմանափակումներ:

Մայիսի 25-ին՝

ժամը 1:00-ից 03:00-ն փակ է լինելու Արզնի օդանավակայան - Նոր Գեղի բնակավայր - Երեւանյան խճուղի - Եղվարդի խճուղի- Երեւանի Հալաբյան փողոց - Ծիծեռնակաբերդի խճուղի ճանապարհահատվածը,

ժամը 1:00-ից 07:00-ն փակ է լինելու Աթենքի փողոց - Մաշտոցի պողոտա - Ամիրյան փողոց ճանապարհահատվածը: Աթենքի փողոցը փակ կլինի մինչեւ մայիսի 28՝ միջոցառման ավարտը,

ժամը 1:30-ից 07.00-ն՝ սահմանափակվելու է երթեւեկությունը Հանրապետության հրապարակում եւ հրապարակ մուտք գործող փողոցներում,

ժամը 3:00-ից 07:00-ն՝ փակ է լինելու Ամիրյան փողոց - Տիգրան Մեծի պողոտա - Ագաթանգեղոսի փողոց - Գրիգոր Լուսավորչի փողոց - Արգիշտիի փողոց - Աթենքի փողոց հատվածը,

ժամը 2:00-ից 3:00-ն՝ փակ է լինելու Շահումյան հրապարակից Խորենացու փողոց - Ագաթանգեղոսի փողոց հատվածը:

Մայիսի 26-ին՝

ժամը 7:00-ից 15:00-ն՝ սահմանափակվելու է երթեւեկությունը Աթենքի փողոց-Մաշտոցի պողոտա - Ամիրյան փողոց հատվածում, ինչպես նաեւ փակ է լինելու Տիգրան Մեծի պողոտա - Մհեր Մկրտչյանի փողոց - Խորենացու փողոց - Իտալիայի փողոց - նախկին «Մայրաքաղաքային» գնդի տարածք հատվածը,

ժամը 10:00-ից 15:00-ն՝ փակ է լինելու Քրիստափորի փողոց - Տիգրան Մեծի պողոտա խաչմերուկը, Աթենքի փողոցից՝ Տիգրան Մեծի պողոտա - Ագաթանգեղոսի փողոց - Գրիգոր Լուսավորչի փողոց - Արգիշտիի փողոց- Աթենքի փողոց հատվածը:

Մայիսի 28-ին՝

ժամը 07:00-ից 15:00-ն փակ են լինելու նշված բոլոր ճանապարհահատվածները, իսկ Հանրապետության հրապարակ - Տիգրան Մեծի պողոտա - Քրիստափոր խաչմերուկ հատվածը՝ մինչեւ մայիսի 29-ը՝ ժամը 1:00-ն:

● *Ըստ վիճակագրական տվյալների՝ նախորդ շաբաթ գրանցվել է թմրանյութի հայտնաբերման 6 դեպք:*

ԼՈՒՐԵՐ

ԿԱՄԵՑՎԵԼ Է

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Երեւանի կենտրոնի տեսուչների կողմից Սուսաննա Թադեւոսյան Կարլ-Լիբկնեխտի անհատ ձեռնարկատիրոջը պատկանող կաթնամթերքի արտադրամասում (ք. Երեւան, Երվանդ Օտյան փողոց) իրականացված ստուգման ընթացքում պարզվել է, որ խախտվել են սանիտարահիգիենիկ մի շարք պահանջներ, մասնավորապես՝

- արտադրական շինությունը, որտեղ իրականացվել է հորած պանրի փաթեթավորումը, ապահովված չի եղել բնական եւ մեխանիկական օդափոխության միջոցներով, սանհանգույցներով, ձեռքերը լվանալու համար նախատեսված լվացարաններով,
- հատակի մակերեւույթը պատրաստված չի եղել անջրանցիկ, լվացվող նյութերից,
- պատերի մակերեւույթները պատրաստված չեն եղել անջրանցիկ, լվացվող նյութերից,
- առաստաղը պատրաստված չի եղել այնպես, որպեսզի կանխարգելվի կեղտի կուտակումը, բորբոսի առաջացումը եւ մասնիկների թափվելու հնարավորությունը,
- դռները պատրաստված չեն եղել չներծծող նյութերից,
- բացակայել են կոյուղու համակարգերը,
- սննդի կառույցը ապահովված չի եղել անձնակազմի համար նախատեսված հանդերձարանով:

Տեսչական մարմնի ղեկավարի որոշմամբ՝ կասեցվել է կաթնամթերքի արտադրամասի արտադրական գործունեությունը:

Խախտումները վերացնելու համար սահմանվել է վերջնաժամկետ:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՐԳԵԼՔ

Կառավարությունը սահմանել է Հայաստանի Հանրապետության տարածքից սիգի ձկնկիթի արտահանման ժամանակավոր արգելք՝ 2026 թ. հուլիսի 6-ից վեց ամիս ժամկետով: Որոշման ընդունման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության, Սեւանա լճում կենսապաշարի կայուն օգտագործման եւ կենսաբազմազանության պահպանության պահանջից: Սեւան լճում սիգի կայուն արդյունագործական որսի ապահովման համար կարեւոր պայմաններից է բնական վերարտադրության ապահովումը: Այն կնպաստի միջազգային շուկայում բարձր արժեք ունեցող սիգի ձկնկիթի արտահանման հնարավոր բացասական հետեւանքները կանխարգելելուն, ինչպես նաեւ մարդածին մեծ բացասական ազդեցության ու կենսառեսուրսների նկատմամբ ձեւավորված սպառողական վերաբերմունքի հնարավոր բացասական հետեւանքները կանխարգելելուն, արդյունագործական բարձր արժեք ունեցող ձկնատեսակի պահպանությունը եւ բնականոն վերարտադրությունը ապահովելուն:

ՅՈՒՆԻԲԱՆԿ

3.9 ՄԼՐԴ ԴՐԱՄԻ ԲԱԺՆԵՏՈՄՍ

Յունիբանկը հայտարարել է 3.9 մլրդ ՀՀ դրամ ծավալով սովորական բաժնետոմսերի նոր թողարկման մասին: Մինչեւ 2026 թվականի սեպտեմբերի 9-ը բանկը նախատեսում է տեղաբաշխել 10 մլն բաժնետոմս:

2015 թվականին իրականացված IPO-ից ի վեր Յունիբանկի բաժնետոմսերի արժեքն աճել է շուրջ 70%-ով: Նոր թողարկման մեկ բաժնետոմսի տեղաբաշխման գինը կազմում է 390 ՀՀ դրամ: Բաժնետոմսերը կարող են ձեռք բերել ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձինք՝ բանկի ցանկացած մասնաճյուղում: Ներդրման նվազագույն ծավալը կազմում է 1,014,000 ՀՀ դրամ: Բաժնետոմսերի տեղաբաշխումից հետո բանկը նախատեսում է դիմել Հայաստանի ֆոնդային բորսա (AMX)՝ բաժնետոմսերը B ցուցակում ներառելու համար, քանի որ ազատ շրջանառության մեջ գտնվող բաժնետոմսերի (free float) մասնաբաժինն արդեն գերազանցում է 10%-ը:

2024 թվականի համար Յունիբանկը բաժնետերերին տրամադրեց 7.8 մլրդ ՀՀ դրամի շահութաբաժիններ, ինչը գրեթե երկու անգամ գերազանցեց նախորդ տարվա ցուցանիշը: Մինչեւ այս տարվա հունիսի վերջ կկայանա Յունիբանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը, որի ընթացքում նախատեսվում է հաստատել 2025 թվականի շահութաբաժինների չափը:

2026 թվականի առաջին եռամսյակի արդյունքներով Յունիբանկն ապահովել է 1.8 մլրդ դրամ զուտ շահույթ: Բանկի ակտիվները կազմել են 395 մլրդ ՀՀ դրամ, իսկ վարկային ներդրումները՝ 274 մլրդ ՀՀ դրամ: Յունիբանկը Հայաստանում առաջին բանկն էր, որը ներդրեց արհեստական բանականության վրա հիմնված վարկային սկորինգի համակարգ: Բանկը POS վարկավորման ծավալով երկրի առաջատար հինգ բանկերի շարքում է եւ զբաղեցնում է առաջատար դիրք տրամադրված POS վարկերի քանակով:

Վարկային պորտֆելի որակի եւ շահութաբերության էական բարելավման արդյունքում Moody's-ը Յունիբանկին շնորհել է երկարաժամկետ ավանդների B1 վարկանիշ՝ «կայուն» կանխատեսմամբ:

Բաժնետոմսերի Ազդագիրը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 2026թ. մայիսի 13-ի Թիվ N 1/210Ա որոշմամբ եւ հրապարակվել բանկի կայքում՝ www.unibank.am:

ԼՈՒՐԵՐ

ՅՈՒՆԻՍՊՈՐՏԸ՝ ԳԱՎԱԹԱԿԻՐ

Յունիսպորտ ակումբը, որի գլխավոր հովանավորը Յունիբանկն է, նվաճեց ֆուտզալի Հայաստանի գավաթը: Մրցաշարի եզրափակիչում Յունիսպորտը 10-1 հաշվով համոզիչ հաղթանակ տարավ ՊրոԴեւ թիմի նկատմամբ՝ նվաճելով Հայաստանի գավաթը: Մրցաշարի ընթացքում Յունիսպորտը ցուցադրեց բարձր պատրաստվածություն, վստահ եւ տպավորիչ խաղ: Հաղթելու ձգտումը, կարգապահությունը եւ թիմային ոգին այն արժեքներն են, որոնք միավորում են սպորտը եւ բիզնեսը՝ հանգեցնելով գերազանց արդյունքների: Այս մրցաշրջանում Յունիսպորտը շարունակում է պայքարել եւս մեկ տիտղոսի համար: Ֆուտզալի Հայաստանի բարձրագույն խմբի փլեյ-օֆֆի եզրափակիչում թիմը կմրցի Երեւան ակումբի հետ: Աջակցելով Յունիսպորտին՝ Յունիբանկը նպաստում է հայկական ֆուտզալի զարգացմանն ու մարզիկների ապագա հաջողություններին՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ միջազգային ասպարեզներում: *(Գ)*

ՍԱՀՄԱՆԱՓԱԿԵԼՈՒ Է

«Россельхознадзор»-ը (Անասնաբուժական եւ բուսասանիտարական հսկողության դաշնային ծառայությունը) 2026 թվականի մայիսի 22-ից ժամանակավոր սահմանափակումներ կսահմանի Հայաստանից ծաղիկների ներմուծման վրա: Այս մասին հայտնել են գերատեսչությունից: «2026 թվականի մայիսի 22-ից սկսած Ռոսսելխոզնադզորը ժամանակավոր սահմանափակումներ կսահմանի Հայաստանից ծագող եւ առաքվող ծաղկային արտադրանքի ներմուծման վրա մինչեւ ջերմոցային ստուգումների ավարտը եւ դրանց արդյունքների վերլուծությունը», - ասվում է հայտարարության մեջ: Գործակալությունը պարզաբանել է, որ որոշումը կայացվել է Ռուսաստանի բուսասանիտարական անվտանգությունը եւ արտահանման ներուժը պաշտպանելու համար: Հայտարարության մեջ ընդգծվում է, որ չնայած Հայաստանի սննդի անվտանգության տեսչության կողմից տրված երաշխիքներին, ԵԱՏՄ-ի համար կարանտինային ապրանքների հայտնաբերումը շարունակվում է: Այսպիսով, ներմուծված 96.2 միլիոն ծաղկային արտադրանքի մեջ հայտնաբերվել է 135 դեպք, որը կազմում է 2025 թվականի ընթացքում հայտնաբերված դեպքերի ընդհանուր թվի 77%-ը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հայաստանի եւ Թուրքիայի Հանրապետությունների սահմանային անցակետում, այնուհետեւ ՏԿԵՆ «Զրառ» ՓԲԸ-ի վարչական շենքում տեղի ունեցավ «Սարդարապատի կարգավորիչի շահագործման» եւ «Ախուրյանի ջրամբարի շահագործման» մշտական գործող անդրսահմանային ջրային ռեսուրսների կառավարման հայ-թուրքական հանձնաժողովների հանդիպումը: Այս մասին տեղեկացնում են Զրային կոմիտեից:

Ողջույնի խոսքով է հանդես եկել «Զրառ» ՓԲԸ-ի տնօրեն Տիգրան Վարդանյանը: Նա նշել է, որ կնքված փաստաթղթերը կազմվել են երկուստեք շահավետ պայմաններով:

Հանդիպման ընթացքում ձեռք են բերվել մի շարք կարեւոր պայմանավորվածություններ:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՓՈՔՐԻԿ ՍԵՎ ՇԱՊԻԿ

ԱՄԱՌՎԱ ԱՄԵՆԱՈՃԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Հոլիվուդյան աստղ Ջենիֆեր Էնիսթոնը եւ սուպերմոդել Քենդալ Ջենները կրկին հայտնվել են նորաձեւության ֆնարկումների կենտրոնում՝ այս անգամ իրենց չափազանց պարզ, բայց միեւնույն ժամանակ անթերի ամառային կերպարների շնորհիվ: Երկուսն էլ ընտրել են զգեստապահարանի հավերժական ու բազմակողմանի հագուստներից մեկը՝ փոքրիկ սեւ շապիկը, որն արդեն երկար տարիներ չի կորցնում իր արդիականությունը:

Ջենիֆեր Էնիսթոնը Ինստագրամում հրապարակված լուսանկարում ներկայացել էր դասական սեւ շապիկով, բաց կապույտ ջինսերով եւ նուրբ ոսկեգույն զարդերով: Նրա կերպարը հանգիստ էր, բնական եւ շատ էլեգանտ՝ առանց ավելորդ շքեղության: Դերասանուհին հերթական անգամ ապացուցեց, որ մինիմալիզմը կարող է ամենաանհավանական ոճերից մեկը լինել, հատկապես ամռանը, երբ հարմարավետությունն ու թեթեւությունը առաջնային են:

Մյուս կողմից՝ Քենդալ Ջենները Լոս Անջելեսի փողոցներում ընտրել էր գրեթե նույն նորաձեւության բանաձեւը, բայց իր մոդելային ոճով: Նա սեւ բազիկ շապիկը համադրել էր սպիտակ ջինսերի եւ բալետի կոշիկների հետ՝ ստեղծելով հանգիստ, բայց ոճային կերպար, որն այսօր համարվում է փողոցային ոճի ամենապահանջված ուղղություններից մեկը: Քենդալի կերպարը եւս մեկ անգամ հիշեցրեց, որ նույնիսկ ամենապարզ հագուստը կարող է թանկարժեք եւ նորաձեւ տեսք ունենալ, եթե ճիշտ է համադրված:

Այս երկու աստղերի կերպարները ցույց են տալիս, որ փոքրիկ սեւ շապիկը պարզապես հիմնական հագուստ չէ. այն նորաձեւության ներդրում է, որը կարելի է կրել տարվա բոլոր եղանակներին: Ամռանը այն հեշտությամբ համադրվում է ջինսերի, շորտերի, լայն տաբատների կամ նույնիսկ մետաքսե կիսաշրջազգեստների հետ: Բացի այդ, սեւ գույնը միշտ տալիս է ավելի հավաքված եւ պարզված տեսք:

Նման ոճ ստեղծելու համար շատերը ուշադրություն են դարձնում Քուինս Բրենդի առաջարկներին, որտեղ ներկայացված են բամբակյա, մոդալ, մետաքսե եւ նույնիսկ քաշմիրե սեւ շապիկներ՝ մատչելի գներով: Բրենդի ամենահայտնի տարբերակներից մեկը 100 տոկոս բամբակից պատրաստված կռունկ-շապիկն է, որը շնչառական է, փափուկ եւ ունի գեղեցիկ կառուցվածք: Շատ գնորդներ նշում են, որ այն «չափազանց հարմարավետ է» եւ «ավելի թանկ տեսք ունի, քան իր իրական գինը»:

Եթե նախընտրում եք ավելի կանացի վզնոց, ապա բամբակ-մոդալ խառնուրդից պատրաստված Scoop Neck շապիկը կարող է իդեալական տարբերակ լինել: Այն շատ փափուկ է, չի ճմրթվում եւ հարմար է ամենօրյա կրելու համար: Իսկ ավելի էլեգանտ տեսք սիրողների համար բրենդն առաջարկում է նաեւ լվացվող, ձգվող մետաքսե շապիկ՝ թեթեւ եւ հարմար թե՛ գրասենյակի, թե՛ երեկոյան հանդիպումների համար:

Նորաձեւության մասնագետները նշում են, որ 2026 թվականի ամառային գլխավոր թրենդերից մեկը հենց մինիմալ շքեղության ոճն է, որտեղ կարեւոր են որակյալ հիմնական հագուստները, բնական գույները եւ պարզ համադրությունները: Եվ Ջենիֆեր Էնիսթոնի ու Քենդալ Ջենների կերպարները դրա լավագույն օրինակներից են:

Փոքրիկ սեւ շապիկը շարունակում է մնալ նորաձեւության աշխարհի ամենաէժան եւ անփոխարինելի հագուստներից մեկը. այն երբեք չի դուրս գալիս նորաձեւությունից եւ միշտ օգնում է ստեղծել հանգիստ, բայց շատ ոճային կերպար:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀՐԱԺԵՇՏԻ ՓԱԿ ԸՆԹՐԻՔ

Մադրիդի «Ռեալի» պաշտպան Դանիել Կարվախալը հրաժեշտի ընթրիք է կազմակերպել իր թիմակիցների եւ ակումբի աշխատակիցների համար, գրում է armsport-ը:

Միջոցառումը կայացել է այն բանից հետո, երբ մայիսի 18-ին ակումբը պաշտոնապես հայտարարեց պայմանագրի ժամկետի ավարտի պատճառով Կարվախալի հեռանալու մասին: Ուշագրավ է, որ հրաժեշտի երեկոյին հրավիրված չի եղել թիմի գլխավոր մարզիչ Ալվարո Արբելոան: Այս մասին X սոցիալական ցանցում հայտնել է The Athletic-ի լրագրող Մարիո Կորտեգանան: Նշենք, որ ավելի վաղ մամուլում բազմիցս լուրեր էին շրջանառվում Կարվախալի եւ Արբելոայի միջեւ առկա լարված հարաբերությունների մասին: Դանիել Կարվախալը Մադրիդի «Ռեալի» սան է: «Արքայական ակումբի» ներկայիս ավագը գլխավոր թիմի կազմում անընդմեջ հանդես էր գալիս 2013 թվականի ամառվանից: Ընթացիկ մրցաշրջանում իսպանացի ֆուտբոլիստը բոլոր մրցաշարերում անցկացրել է 22 հանդիպում: Ընդհանուր առմամբ, նա «Ռեալի» մարզաշապիկով մասնակցել է 450 խաղի՝ դառնալով 14 գոլի հեղինակ:

ԱՐԴԵՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ Է



Ֆուտբոլային աշխարհի ամենահեղինակավոր ինսայդերները միակարծիք են՝ Խոսեպ Գվարդիոլան կհեռանա «Մանչեսթեր Սիթիի» գլխավոր մարզչի պաշտոնից կիրակի օրը կայանալիք «Ասթոն Վիլայի» դեմ խաղից հետո, իսկ «քաղաքաբնակների» հաջորդ մարզիչը կդառնա Էնցո Մարեսկան: Ինչպես հաղորդում է The Athletic-ի լրագրող Դեւիդ Օրնշտեյնը, Մարեսկան արդեն աշխատում է «Մանչեսթեր Սիթիի» տրանսֆերների եւ նախամրցաշրջանային նախապատրաստության պլանների վրա, հայտնում է armsport-ը:

Հիշեցնենք, որ Էնցո Մարեսկան նախկինում արդեն աշխատել է «Մանչեսթեր Սիթիում»՝ եւ՛ որպես երիտասարդական թիմի մարզիչ, եւ՛ որպես Խոսեպ Գվարդիոլայի մարզչական շտաբի անդամ: 2023/24 մրցաշրջանում նա գլխավորել է «Լեսթերը», ինչից հետո տեղափոխվել է «Չելսի»: 2026 թվականի հունվարի 1-ին Մարեսկան հեռացվել է լոնդոնյան ակումբից:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՉԵՂԱՐԿԵԼ Է ԱԱ–2026–Ի ԿԱՐԵՎՈՐ ՀԱՎԱՔԸ

Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետության ազգային հավաքականի պաշտոնական ներկայացուցիչ Ջերի Կալեմոն հայտնել է, որ աֆրիկյան թիմը չեղարկել է երկրի ներսում նախատեսված եռօրյա ուսումնամարզական հավաքն ու 2026 թվականի աշխարհի առաջնությանը մեկնելուց առաջ երկրպագուների հետ հրաժեշտի արարողությունը, գրում է armsport-ը: Որոշման պատճառը երկրում Էբոլա տենդի բռնկումն է:

«Նախապատրաստությունը պետք է ընթանար երեք փուլով. Կինշասայում (Կոնգոյի ԴՀ մայրաքաղաք - խմբ.), որտեղ մենք պետք է հրաժեշտ տայինք երկրպագուներին, Բելգիայում եւ Իսպանիայում, որտեղ երկու ընկերական հանդիպում ենք անցկացրել Դանիայի ու Չիլիի հետ, եւ երրորդ փուլը, որը մեկնարկում է հունիսի 11-ին՝ ԱՄՆ-ի Հյուսթոն քաղաքում: Չեղարկվել է միայն մեկ փուլ՝ Կինշասայում նախատեսվածը»,- Կալեմոյի խոսքերն է մեջբերում ESPN-ը:

Հատկանշական է, որ Կոնգոյի ԴՀ-ի ազգային հավաքականի կազմում հանդես է գալիս Հայաստանի չեմպիոն «Նոայի» դարպասապահ Թիմոտի Ֆայուլուն: Ավելի վաղ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) Կոնգոյի ԴՀ-ում եւ Ուգանդայում Էբոլայի բռնկումը ճանաչել էր որպես միջազգային նշանակության հանրային առողջապահական արտակարգ իրավիճակ:

ՏԱՐՎԱ ՄԱՐԶԻԿ

Մեծ սաղավարտի մրցաշարերի յոթակի հաղթող, աշխարհի երկրորդ ռակետ, իսպանացի թենիսիստ Կառլոս Ալկարասը ճանաչվել է «Տարվա մարզիկ» հեղինակավոր Laureus World Sports Awards - 2026 մրցանակաբաշխության վարկածով, հայտնում է armsport-ը: Գլխավոր մարզական իրադարձություններից մեկն արդեն երրորդ տարին անընդմեջ անցկացվում է Իսպանիայի մայրաքաղաք Մադրիդում: Այս պատվավոր կոչման համար իսպանացի թենիսիստի հետ համառ պայքար էին մղում համաշխարհային սպորտի այնպիսի գերաստղեր, ինչպիսիք են.

- Յանիկ Սիներ (թենիս, Իտալիա)
- Ուսման Դեմբելե (ֆուտբոլ, Ֆրանսիա)
- Արման Դյուպլանտիս (աթլետիկա, Շվեդիա)
- Մարկ Մարկես (մոտոարշավ, Իսպանիա)
- Տադեյ Պոգաչար (հեծանվասպորտ, Սլովենիա)

Նշենք, որ Laureus Awards-ի հանրահայտ արձանիկը նախագծվել եւ պատրաստվել է շքեղության խորհրդանիշ հանդիսացող Cartier ապրանքանիշի կողմից: Ալկարասն իր մրցանակը ստացել է ֆուտբոլային լեգենդներ Իկեր Կասիլյասի եւ Լուիշ Ֆիգուի ձեռքից: Համաձայն կանոնակարգի՝ Laureus-ի անվանակարգերի հավակնորդների կարճ ցուցակները եւավորվում են ավելի քան 70 երկրների շուրջ 1000 առաջատար մարզական ԶԼՄ-ների ներկայացուցիչների քվեարկության արդյունքում: Դրանից հետո Laureus համաշխարհային մարզական ակադեմիան գաղտնի քվեարկությամբ ընտրում է հաղթողներին:

● *Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում մայիսի 23-ին՝ ժամը 12:00-ին, կկայանա «Առյուծն ու խաղալիքը» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ է անհրաժեշտ գրավոր տարբերակով դիմումի ներկայացման համար:

Սիմոն Գալստյան, 56 տարեկան



ՊԱՏԱՍԽԱՆ. Ֆիզիկական, իրավաբանական անձանցից ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում (այսուհետ՝ Ծառայություն) ստացված, ինչպես նաեւ պետական այլ մարմիններից վերահասցեագրված դիմումները պետք է լինեն գրավոր եւ պարունակեն.

1) Ծառայության անվանումը (հստակ երեւա, որ դիմումը հասցեագրված է Ծառայությանը),

2) դիմողի անունը, ազգանունը, իրավաբանական անձի լրիվ անվանումը,

3) դիմողի հասցեն, իրավաբանական անձի գտնվելու վայրը,

4) առարկան՝ դիմումով բարձրացված հարցերը, ներկայացված պահանջը (խնդրանքը),

5) կազմման տարին, ամիսը, ամսաթիվը,

6) ֆիզիկական անձի կամ իրավաբանական անձի իրավասու պաշտոնատար անձի ստորագրությունը («Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի հոդված 31):

Դիմումին կցվում են անհրաժեշտ փաստաթղթերը (եթե այդպիսիք առկա են), իսկ եթե դիմումը ներկայացվում է ֆիզիկական կամ իրավաբանական անձի ներկայացուցչի կողմից, ապա դիմումին կից պետք է ներկայացվի նաեւ օրենքով սահմանված կարգով ներկայացուցչին տրված լիազորագիրը («Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի հոդված 31):

ՀՀ ազգային անվտանգության ծառայություն

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչքա՞ն է կազմում անհուսալի վարկեր ունեցող անձանց տնտեսական ակտիվության խթանման միջոցառման շահառուի վարկային պարտավորության (պարտավորությունների) մարմանն ուղղվող (բռնագանձվող) ամենամսյա գումարի չափը:

Վազգեն Տիգրանյան, 61 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Միջոցառման շրջանակում շահառուին տրվում է ֆինանսական աջակցություն՝ շահառուի աշխատավարձից եւ դրան հավասարեցված վճարումներից (քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակներում ստացված եկամտից) հաշվարկված եկամտային հարկի գումարի 100%-ի չափով, որն ուղղվում է անհուսալի վարկային պարտավորության (պարտավորությունների) մարմանը:

ՀԿԱ ծառայության կողմից շահառուի նկատմամբ վարկավորողի ներկայացրած՝ հարկադիր կատարման ենթակա ակտերի կատարման ընթացքում անհուսալի վարկի մասով՝

շահառուի աշխատավարձից (քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակներում ստացված եկամտից) բռնագանձվող գումարի չափը սահմանվում է 20% (եթե օրենքով կամ կատարման ենթակա ակտով բռնագանձման առավել նվազ չափ սահմանված չէ)՝ 24 ամիս ժամկետով՝ սկսած շահառու ճանաչվելու վերաբերյալ տեղեկատվությունը ստանալուն հաջորդող ամսվա 1-ից.

շահառուի գույքերի նկատմամբ իրականացվող բռնագանձումները կասեցվում են՝ առանց դրանց նկատմամբ առկա արգելանքների վերացման, եթե առկա չեն այլ պահանջատերեր:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Ողբերգական ավտովթար Սյունիքի մարզում. բախվել են 2 «Mercedes Sprinter»-ը: Վարորդներից մեկը հիվանդանոցում, գիտակցության չգալով, մահացել է.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 4 + 8 + 12 + 16
	Կոտայքի լեռներ	+ 4 + 7 + 12 + 15
	Կոտայքի նախալեռներ	+ 6 + 9 + 14 + 17
	Գեղարքունիք	+ 4 + 8 + 10 + 14
	Լոռի	+ 6 + 10 + 14 + 17
	Տավուշ	+ 6 + 9 + 14 + 18
	Արագածոտնի լեռներ	+ 3 + 6 + 11 + 15
	Արագածոտնի նախալեռներ	+ 6 + 10 + 14 + 19

	Արարատ	+ 9 + 12 + 16 + 19
	Արմավիր	+ 10 + 13 + 18 + 20
	Վայոց ձորի լեռներ	+ 3 + 6 + 11 + 15
	Վայոց ձորի նախալեռներ	+ 9 + 13 + 18 + 22
	Սյունիքի լեռներ	+ 3 + 6 + 9 + 12
	Սյունիքի նախալեռներ	+ 4 + 8 + 14 + 17
	Սյունիքի հովիտներ	+ 9 + 13 + 19 + 22
	Երեւան	+ 10 + 12 + 19 + 21

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **21.05.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*